

# Կապիտալի հոսքերը և երկրի արտաքին հարստությունը

Երկրի արտաքին հարստությունը ( $W$ ) հավասար է տեղական ռեզիդենտների կողմից տնօրինվող մնացյալ աշխարհի ակտիվների (արտաքին ակտիվներ՝  $A$ ) և մնացյալ աշխարհի ռեզիդենտների կողմից տնօրինվող տեղական ակտիվների (արտաքին պարտավորություններ՝  $L$ ) տարբերությանը.

$$W = A - L$$

2017թ-ի վերջին ՀՀ արտաքին ակտիվները կազմում էին 5.2 մլրդ դոլ., իսկ արտաքին պարտավորությունները 14 մլրդ դոլ.: Այսինքն՝ ՀՀ արտաքին հարստությունը  $-8.8$  մլրդ դոլ. էր: Վերջինը համարժեք է ՀՀ ՀՆԱ-ի 76.5%-ին (ՀՆԱ 2017թ-ին 11.5 մլրդ դոլ. էր):

Երկրի «արտաքին հարստությունը» այլ կերպ կոչվում է «զուտ միջազգային ներդրումային դիրք» կամ «զուտ արտաքին ակտիվներ»:

Ի տարբերություն վճարային հաշվեկշռի, որը հոսքի ցուցանիշ է, միջազգային ներդրումային դիրքը պաշարի ցուցանիշ է:

Երբ  $W > 0$ , ապա երկիրը «զուտ վարկատու» է. արտաքին ակտիվները գերազանցում են արտաքին պարտավորությունները, այսինքն՝ մնացյալ աշխարհը երկրին պարտք է ավելի շատ, քան երկիրը պարտք է մնացյալ աշխարհին:

Երբ  $W < 0$ , ապա երկիրը «զուտ վարկառու» է. արտաքին պարտավորությունները գերազանցում են արտաքին ակտիվները, այսինքն՝ երկիրը մնացյալ աշխարհին պարտք է ավելի շատ, քան մնացյալ աշխարհը պարտք է երկրին:

Արտաքին հարստությունը երկրի ազգային հարստության բաղադրիչներից մեկն է: Մյուս բաղադրիչը երկրի ներքին հարստությունն է, որը հավասար է սովյալ երկրում ռեզիդենտների տնօրինած ոչ ֆինանսական ակտիվների ընդհանուր արժեքին ( $K$ ):

$$\text{Երկրի ընդհանուր հարստություն} = \underbrace{K}_{\text{ոչ ֆինանսական ակտիվներ}} + \underbrace{(A - L)}_{\text{արտաքին հարստություն}}$$

Ֆինանսական ակտիվներն ընդհանուր հարստությունում չենք ներառում, քանի որ դրանք հանդիսանում են երկրի մի ռեզիդենտի պարտավորությունը մեկ այլ ռեզիդենտի նկատմամբ, ուստի՝ հանրագումարում զեղչվում են (ակտիվները հակակշռում են պարտավորություններին):

Ընդհանուր հարստության փոփոխությունը հավասար է բաղադրիչների հավելածերի ու արժեքների փոփոխության հանրագումարին.

$$\begin{aligned} \text{Ընդհանուր հարստության} &= \underbrace{K \text{ հավելան} + (A - L) \text{ հավելան}}_{\text{ակտիվի հավելան=ձեռք բերում հանած վանաոմ}} \\ \text{փոփոխություն} &+ \underbrace{K \text{ կապիտալ օգուտ} + (A - L) \text{ կապիտալ օգուտ}}_{\text{Կապիտալ օգուտն արժեքի անն է}} \end{aligned}$$

Այսինքն՝ արտաքին ակտիվի պաշարի փոփոխությունը հնարավոր է երկու դեպքում. (1) երբ տեղի են ունենում ֆինանսական հոսքեր, և (2) երբ պաշարի արժեքը փոխվում է:

Ֆինանսական հոսքեր: Իրական և ֆինանսական ակտիվների առևտրի արդյունքում երկրի արտաքին ակտիվների և կամ պարտավորությունների պաշարը փոխվում է:

Մասնավորապես՝ արտաքին ակտիվների զուտ արտահանումը (= վաճառք – ձեռք բերում  $> 0$ ) նվազեցնում է արտաքին ակտիվների պաշարը, ուստի՝ կրճատում է արտաքին հարստությունը:

Տեղական ակտիվների զուտ արտահանումը (= վաճառք – հետ գնում  $> 0$ ) ընդլայնում է արտաքին պարտավորությունների պաշարը, ուստի՝ դարձյալ կրճատում է արտաքին հարստությունը:

Ակտիվների զուտ արտահանումը հաշվառվում է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում (FA):

Արժեքի փոփոխություն: Արտաքին ակտիվների և պարտավորությունների արժեքը ժամանակի ընթացքում փոխվում է՝ կապիտալ օգուտի կամ կորստի արդյունքում: Արտաքին հարստության դեպքում արժեքի փոփոխությունը (կապիտալ օգուտը կամ կորուստը) պայմանավորվում է գնի կամ փոխարժեքի փոփոխությամբ:

Ենթադրենք՝ ՀՀ ռեզիդենտը Լոնդոնի արժեթղթերի բորսայում ձեռք է բերում Coca-Cola HBC (Hellenic Bottling Company)-ի 100 արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 7 ֆունտ արժեքով: Փոխարժեքը 1.5 դոլար/ֆունտ է: ՀՀ արտաքին ակտիվները կընդլայնվեն  $7 \times 1.5 = 10.5 \times 100 = 1050$  դոլարով:

Համարենք՝ այնուհետև արժեթղթի գինը նվազում է 7-ից 6 ֆունտ: Արտաքին ակտիվի արժեքը կկազմի  $6 \times 1.5 = 9 \times 100 = 900$  դոլար: Արժեքի 150 դոլար կրճատումը կապիտալ կորուստ է՝ պայմանավորված գնի փոփոխությամբ: Այնուհետև փոխարժեքը բարձրանում է 1.5-ից 1.6 դոլար/ֆունտ: Ակտիվի արժեքը կկազմի  $6 \times 1.6 = 9.6 \times 100 = 960$  դոլար: Արժեքի 60 դոլար աճը կապիտալ օգուտ է՝ պայմանավորված փոխարժեքի փոփոխությամբ:

Տեղական կապիտալի պաշարի (K) հավելաճը հավասար է ներդրումներին (I): Արտաքին հարստության (A – L) հավելաճը, որը արտաքին ակտիվների զուտ փոփոխության և արտաքին պարտավորությունների զուտ փոփոխության տարբերությունն է, հավասար է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի հաշվեկշռին՝ FA:

$$\text{Ընդհանուր հարստության փոփոխություն} = \underbrace{I + FA}_{\text{կապիտալ օգուտ}} + \underbrace{K}_{\text{կապիտալ օգուտ}} + \underbrace{(A - L)}_{\text{կապիտալ օգուտ}}$$

$$\text{Վճարային հաշվեկշռի նույնությունից՝ } CA + KA - FA = 0, \text{ հետևում է } FA = CA + KA$$

$$\text{Ընդհանուր հարստության փոփոխություն} = \underbrace{I + (CA + KA)}_{\text{կապիտալ օգուտ}} + \underbrace{K}_{\text{կապիտալ օգուտ}} + \underbrace{(A - L)}_{\text{կապիտալ օգուտ}}$$

$$\text{Հիմնական մակրոտնտեսական նույնությունից՝ } S = I + CA$$

$$\text{Ընդհանուր հարստության փոփոխություն} = \underbrace{S + KA}_{\text{կապիտալ օգուտ}} + \underbrace{K}_{\text{կապիտալ օգուտ}} + \underbrace{(A - L)}_{\text{կապիտալ օգուտ}}$$

*Դրանով իսկ, երկրի ընդհանուր հարստության աճը հնարավոր է միայն երեք դեպքում.*

- *խնայողությունների ընդլայնում,*
- *ակտիվների ստացում իբրև նվիրատվություն (կամ այլ կերպ ձեռք բերում, օրինակ՝ բռնագրավում),*
- *տնօրինվող ակտիվների արժեքի աճ:*